

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրականօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

<https://www.sourphagop.org/period/vol31special.pdf>



ԼԱ տարի (31-ամեակ)
2024-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Բովանդակություն

Խօսք՝ Հովիի եւ Հոգաբարձութեան	էջ 3
Մեր խօսքը	4
Շնորհակալական նամակ ՀՕՄ-էն	5
https://www.facebook.com/sourphagop.org https://www.instagram.com/sh_sundayschool/	6
Հակիրճ տեղեկութիւններ 2023-24 տարեշրջանի մասին	7
Աշակերտական ներկայութեան տախտակներ	9,41
Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ՝	10
Կիրակնօրեայ Դպրոցը եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի Հովուապետական այցելութիւնը Գանատա	11
Կիրակնօրեայ Դպրոցը եւ եկեղեցւոյ 65-ամեակը	15
Աւարտականներու Տարեվերջի Ներկայացումները	17
Ամփոփում 2023-24 (44-րդ) տարեշրջանին	21
2023-24 տարեշրջանի կազմը	52

ՎԵՐԱՄՈՒՏ՝
15 Սեպտ. 2024
 Ժամը 10:30



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

6 Մայիս 2024

040/23-24

**Սիրելի տնօրենություն,
դաստիարակչական կազմ,
ծնողներ եւ աշակերտուհիներ ու աշակերտներ,**

Այս օրերուն, Հայաստանի մէջ կը բարձրաձայնուի անհրաժեշտութիւնը Հոգևոր Հայաստանի ստեղծման: Հոգևոր Հայաստանը՝ առաքինութիւններով եւ շնորհներով կերտելի Հայաստանն է: Սփիւռքին համար ալ անհրաժեշտ է հոգևոր մակարդակի բարձրանալը:

Հայութիւնը, թե՛ Հայաստանի, եւ թե՛ Սփիւռքի մէջ կոչուած է վերափոխուելու, իր կեանքը նորոգելու այն բոլոր արժէքներով՝ որոնք դարերուն ընթացքին մեզի յոյս են տուած յաղթահարելու չարիքները, եւ ստեղծագործ կեանք ունենալու:

Հայ եկեղեցին մեզի պարզելուած է որպէս ճշմարիտ արժէքներուն աղբիւր: Աստուած ինք մեզի տուած է զայն, որմէ կենսատու ջուրեր կը բխին: Ջուրեր՝ որոնցմէ իւրաքանչիւր խմողի սիրտը կը վերածուի երկինքէն օրհնեալ, աստուածաձայն ջուրերով աղբիւրի մը:

Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեան՝ Հայ եկեղեցւոյ աղբիւրէն կը խմէ, եւ իր կարգին՝ կենսատու ջուրերու աղբիւր մըն է:

Աշակերտուհիներ եւ աշակերտներ, որ ամբողջ տարեշրջան մը Կիրակնօրեայի աղբիւրէն խմեցիք, ձեր շնորհները՝ հոգևոր հայութեան համար շնորհներ են, եւ պիտի ուրախացնեն շատերը:

Մեր սրտագին երախտագիտութիւնը ծնողներուն, դաստիարակներուն եւ տնօրէնութեան, որ միշտ կը լսէք Յիսուսի խօսքը. «ով որ իմ տալիք ջուրէս խմէ՝ յաիտեան պիտի չձարանայ»: Տիրոջ ջուրը «յաիտենական կեանք» կու տայ ամէն օր: Հոգևոր հայութիւնը՝ «յաիտենական կեանք»ի հայութիւնն է:

Տէր ընդ ձեզ:

Լաւագոյն մաղթանքով՝

**Հովի եւ Հոգաբարձութիւն
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՌՈՐԴԵԱՆՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

3401 Olivar-Asselin, Montreal, Qc H4J 1L5 ☎ 514 331 5445 Email: eglise@sourphagop.net

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ 31 Կիրակիներ:

Այս տարի նաեւ 31-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին՝ Դեկտեմբեր 2023-ին մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 23-րդ տարեդարձն էր:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը մնայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, ընդհանրապէս կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ Հայ Քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Ասկէ 95 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստեր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը 107-էն 119-ի բարձրացաւ եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնն ալ 54-էն 70-ի: Այս տարուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ Մանկապարտեզի եւ Նախակրթարանի աշակերտներու աճ արձանագրեցինք, սակայն երկրորդականի աշակերտներուն թիւը նուազեցաւ, հիմնականօրէն որովհետեւ Երկր. Դ. , Ե. տարիքներու աշակերտները շաբաթավերջերուն մասնաժամ վճարովի գործեր ունին:

Աստուծոյ կամքով՝ մեր 45-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 15, 2024-ին է: Յոյսով ենք որ մեծագոյն թիւով աշակերտներ՝ մանկապարտեզի, նախակրթարանի, եւ երկրորդականի մէջ պիտի միանան մեր Կիրակնօրեայ Դպրոցին:

Փառք՝ Աստուծոյ, Պայծառութիւն Հայ եկեղեցւոյ:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ARMENIAN RELIEF SOCIETY OF CANADA (A.R.S.) Inc.
LA CROIX DE SECOURS ARMÉNIENNE DU CANADA (A.R.S.) Inc.



ՄԱՍՆԱՃԻՂԵՐ
CHAPTERS- CHAPITRES

2023-2025. 129
 13 Մայիս, 2024

Պատուարժան՝ տնօրէնութիւն
Ս. Յակոբ Կիրակոսեայ Վարժարանի,

Գեւորդի Մելիք
Cambridge Meghri

Համիլթըն Արեւ
Hamilton Arev

Լաւալ Շուշի
Laval Shoushi

Միսիսսագա Առաքաստ
Mississauga Arakast

Մոնթրէալ Սոսէ
Montreal Sosse

Օթթաւա Սեւան
Ottawa Sevan

Սենթ Կատրինա Արազ
St-Catharines Araz

Թորոնթօ Ռոսինա
Toronto Roubina

Վանկուվըր Արազ
Vancouver Araz

Ուինթըր Ռոսինա
Windsor Roubina

Միւրէլի Տնօրէնութեան անձնակազմ եւ մանաւանդ սիրելի աշակերտներ,

ՀՕՍ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը կու գայ իր սրտագին շնորհակալութիւնները եւ անհուն երախտագիտութիւնը յայտնելու ձեզի, վարչութեանս «Որբախնամ ծրագրին» մէկ որբ հովանաւորելնուդ առթիւ:

Շնորհակալութիւն, որ ձեր այս արարքով, դուք բարեսիրտութիւն կը սերմանէք մեր մատղաշ սերունդին մէջ:

Բոլորիդ քաջատողջութիւն կը մաղթենք, եւ փայլուն ապագայ մեր վարժարանին ու աշակերտութեան:

Յաջողութեան լաւագոյն մաղթաքններով՝

Ընկերական ջերմ բարեւաններով՝



Handwritten signature of Lusine Khachaturian

Լուսին Փալանճեան
Ատենապետ՝
Հայ Օգնութեան Միութեան
Գանատայի Շրջանային Վարչութիւն

3401, Olivar-Asselin, Montréal (Québec) H4J 1L5 • Tél.: (514) 333-1616 • Télécopieur/Fax : (514) 333-1612
 e-mail: ars-canada@bellnet.ca • www.ars-canada.ca

<https://www.facebook.com/sourphagop.org>

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 24-րդ տարին մտաւ 2023-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժնին մէջ կը գտնէք. Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սբ. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնէայ Հայաստան հատորները, երգեր, շարականներ, «Մաշտոցի Արձագանգ»ի բոլոր թիւերը, եւայլն: Այս տարի կանոնաւորաբար թարմացուցինք մեր FACEBOOK-ի եւ Instagram-ի էջերը:



**Sourp Hagop Sunday School Ս. Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոց**

842 likes • 910 followers



Advertise

Manage

Edit

https://www.instagram.com/sh_sundayschool/

sh_sundayschool ▾



119

posts

353

followers

58

following

Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց

Religious organization

Sourp Hagop Sunday School

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛
ըլլաք անոնց...» (Մր 10.14)

Հաւատք, Յոյս, Սէր

sourphagop.org/

3400 Rue Nadon, Montreal, Quebec H4J 1P6

ՀԱԿԻՐՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2023-24 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

44-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2023-24 տարեշրջանը 44-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 44-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Այս տարեշրջան սկսաւ Կիրակի 17 Սեպտեմբեր 2023-ին եւ տեւեց մինչեւ Մայիս 19, 2024: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ Մանկապարտեզի, Նախակրթարանի 4, Երկրորդականի 3 դասարաններ:

31-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2023-24 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 31-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ:

23-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկուան ճրագալոյցի ընթերցումներ

Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչներն ու երկրորդականի աշակերտներ Յունուար 5-ին եւ Մարտ 30-ին եկեղեցւոյ մէջ կատարեցին մարգարեական ընթերցումները:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2023-24 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 119 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 70՝ բաժնուած 8 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2023-24 տարեշրջանին ունեցանք 8 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ եւ Կոկոն

Ծաղիկ եւ Նախակրթարան Ա.

Նախակրթարան Բ. եւ Գ.

Նախակրթարան Դ .

Նախակրթարան Ե.

Նախակրթարան Զ. եւ Երկր. Ա.

Երկրորդական Բ. եւ Գ.

Երկրորդական Դ. եւ Ե.

Երկրորդականի Պատասխանատու

Երգերու եւ շարականներու ուսուցում

«Մաշտոցի Արձագանգ»

Կայքէջի պատասխանատու

FACEBOOK-ի եւ INSTAGRAM

Տնօրէն

Դաստիարակ

Աննա-Մարիա Շամոյեան

Սարին Խշիշեան

Մէրլի Ահարոնեան (օգնական)

Յասմիկ Նաճարեան

Թամար Գիզիրեան

Շողիկ Նաճարեան

Մհեր Պանքեան

Հրակ Պանքեան

Սդեֆան Տէմիրճեան

Առէն Պապիկեան

Առէն Պապիկեան

Սեւակ Պապիկեան

Թորոս Պապիկեան

Առէն Պապիկեան

Ռիմա Խարշաֆճեան

Թորոս Պապիկեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2023-24 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին


Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան իրենց խումբերուն: Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյալից պատմութիւններու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:


Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2023-24 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2023-24 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ Արձանագրուած / Ներկայ

ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	
10 Սեպտեմբեր 2023	Նոր աշակերտներու արձանագրություն
17 Սեպտեմբեր	Տարեսկիզբ եւ վերամուտ
1 Հոկտեմբեր	Վարժարանի աշակերտությունը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդություն ստացաւ
14 Հոկտեմբեր	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր
16 Դեկտեմբեր	Տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ աւարտական դասարանի աշակերտները մասնակցեցան Սուրբ Յակոբ եկեղեցւոյ 65-ամեակի պաշտօնական ճաշկերոյթին:
17 Դեկտեմբեր	Ս. Ծննդեան Տօնակատարություն:
5 Յունուար 2024	Ս. Ծննդեան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ մատուցմամբ մեր աշակերտներուն
11 Փետրուար	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարություն
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հաւկիթ
24 Մարտ	Ծաղկազարդ՝ Կիրակնօրեան փակ էր,
30 Մարտ	Ս. Զատիկուան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ Մատուցմամբ մեր աշակերտներուն
31 Մարտ	Ս. Զատիկ Կիրակնօրեան փակ էր:
12 Մայիս	Մայրերու տօն, Հանդէսի փորձ:
19 Մայիս	Ամաւերջի հանդէս եւ Տարեփակ

Կիրակնօրեայ Դպրոցը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հովուապետական Այցելութիւնը - 2023

Հինգշաբթի՝ 1 Յունիս 2023-ին, Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը բերաւ իր բաժինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցին ներս կայացած Կանոնական աղօթքին եւ Աջահամբոյրին: Մեր երկրորդականի աշակերտներ Մհեր Ստեփանեան (Խաչ), Յարութ Չուլճեան եւ Զաւէն Չուլճեան (մոմակալ), Տնօրէնը (ամպիովանի եւ յանձնախումբի անդամ) եւ մեր երկրորդականի ուսուցիչներէն Պրն. Մհեր Պանքեանը (Քշոց)մաս կազմեցին թափօրին: Երկրորդականի պատասխանատու Պրն. Առէն Պապիկեան եւ Երգի պատասխանատու Պրն. Սեւակ Պապիկեան մաս կազմեցին Դպրաց Դասի երգչախումբին: Շատ մը ուսուցիչներ եւ աշակերտներ (իրենց Կիրակնօրեայ Դպրոցի T-Shirt ները հագած որոնց ետեւը «Հաւատք Յոյս Մէր» գրուած է) ներկայ եղան արարողութեան եւ աջահամբոյրին: «Աստուած Օգնական՝ Վեհափառ ո՛ տէր»:





Armenian Prelacy of Canada

14m · 🌐

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ
ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

«ՀԱԻԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԷՐ» ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ
ՆՇԱՆԱԲԱՆԸ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ






Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց Ճրանչան» շնորհեց Ս. Յակոբ Կիրակնորեայ Դպրոցի Տնօրենին



«...Արդարեւ, մեր փոքրիկներուն ու պատանիներուն քրիստոնէական դաստիարակութիւնը իրենց ֆիզիքական սնունդի կողքին, աւելի քան անհրաժեշտութիւն մըն է՝ առողջ սերունդներ պատրաստելու առաքելութեան մէջ:...»



Կիրակնօրեայ Դպրոցը եւ Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ 65-ամեակ

Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմն ու աւարտական դասարանի աշակերտները մասնակցեցին Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ 65-ամեակի Յոբելէական Ճաշկերոյթին:

Կազմակերպիչ Յանձնախումբի ատենապետուհին Անի Թորիկեան Պապիկեանն էր, եւ Տնօրէնը անդամ Յանձնախումբին:

Օրուան հանդիսավարը մեր երկրորդականի ուսուցիչ Հրակ Պանքեանն էր: Ճաշկերոյթի ընթացքին մեր ուսուցիչներէն երեքը պարգևատրուեցան Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ:

Առէն Պապիկեանը՝ Օրհնութեան Գիրով Կիրակնօրեայ Դպրոցին մէջ իր աւելի քան 10 տարուայ ծառայութեան համար:

Յասմիկ Նաճարեանը եւ Շողիկ Նաճարեանը՝ Անանիա Շիրակացի շքանշանով Կիրակնօրեայ Դպրոցին մէջ իրենց բազմամեայ (գրեթէ 30 տարի) ծառայութեան համար:





Աւարտականներու Տարեվերջի Ներկայացումները

Փետրուար եւ Մարտ ամիսներուն ընթացքին Երկրորդական Ե. աւարտական դասարանի աշակերտները ներկայացուցին իրենց **Տարեվերջի Ներկայացումները (End of Curriculum Presentation)** ի ներկայութեան 3-հոգինոց դատական կազմի մը (Հոգաբարձուներ՝ Տիկ. Նուշիկ Էլոյեան, Տիկ. Անի Թորիկեան Պապիկեան եւ Եկեղեցւոյ Հոգատար Յանձնախումբի անդամ՝ Տիար Միքայէլ Ժուքաբէլեան): Ներկայացումներուն նաեւ ներկայ էին երկրորդականի աշակերտները, ծնողք, բարեկամներ: 2 ներկայացումներուն ներկայ էր նաեւ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ՝ Հոգ2. Հայր Յակոբ Վարդապետ Եագուպեան:

25 Փետրուարին, Երկր Ե. Աւարտական դասարանի աշակերտ **ՄՅԵՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ**ը, յաջողութեամբ ներկայացուց իր աւարտականի դասախօսութիւնը «Ընդհանուր Եկեղեցւոյ Բաժանեալ Ճիւղաւորումները» նիւթին մասին:



3 Մարտին Երկր Ե. Աւարտական դասարանի աշակերտ **ԳՐԻԳՈՐ ՊԵՔԵՐԵԱՆԸ** յաջողութեամբ ներկայացուց իր աւարտականի դասախօսութիւնը «Քրիստոսի Տասներկու Առաքեալները» նիւթին մասին:



17 Մարտին, Երկր. Ե. Աւարտական դասարանի աշակերտ **Յարուք Զուլճեանը** յաջողութեամբ ներկայացուց իր աւարտականի դասախօսութիւնը «Պօղոս՝ Հեթանոսներու Առաքեալը»:



17 Մարտին, ՍԵԼԱԿ ՍՈՒՖԻԱՆԵԱՆ (Իսթիպաթ) (Երկր. Ե), **ԶԱԼԵՆ ԶՈՒԼՃԵԱՆ** (Երկր. Գ.) եւ **ՆՋԱՆ ՊԵՔԵՐԵԱՆ** (Երկր. Գ.) յաջողութեամբ ներկայացուցին «Յիսուսի գանազան առակներն ու հրաշքները» դասախօսութիւնը:



ԱՄՓՈՓՈՒՄ 2023-24 (44-րդ) ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ



Բողբոջ եւ Կոկոն



Ծաղիկ եւ Նախակրթարան Ա.



Նախակրթարան Բ. եւ Գ.



Նախակրթարան Դ.



Նախակրթարան Ե.



Նախակրթարան Զ. եւ Երկրորդական Ա.



Երկրորդական Բ. և Գ.



Երկրորդական Դ. և Ե.

Սեպտեմբեր

10-ին տեղի ունեցավ **Նոր աշակերտներու արձանագրութիւնը:**

17 Սեպտեմբեր 2023-ին **արձանագրութիւնները շարունակուեցան** եւ տեղի ունեցավ մեր 2023-24 Տարեշրջանի (44-րդ) **Վերամուտը:** Աշակերտները նախ սերտեցին այս տաղաւար տօնը, իսկ ետքը զանազան ձեռնարկներով նշելու համար **Խաչվերացը**, խաչեր պատրաստեցին: Նախքան որ մեկնին, իւրաքանչիւր աշակերտ ստացավ ռեհանի բոյս, ըստ հայկական աւանդութեան: Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի Ժամը 10:30 – 1:00 հետեւեալ ձեւով:

10:30-11:00 Զաւար

11:00 -11:10 «Հայր մեր», Աղօթք, Օրուան խորհուրդը, Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթերգ

11:10 - 11:45 Ա. դասապահ

11:45- 12:20 Բ. դասապահ

12:20-12:55 Գ. դասապահ

12:55-13:05 Աղօթք, «Կեցցէ՛ մեր Կիրակնօրեայ Վարժարան...», Արձակում:





Սեպտեմբեր 24-ին Կիրակնօրեայ Դպրոցը արձանագրեց նոր աշակերտներ եւ շարունակեց իր գործունեութիւնը ժամը 10:30-13:00: Աշակերտները, ըստ իրենց դասարանային բաժանութեւրուն, ունեցան 3 դասապահեր: Երգեցողութեան պահուն վերաքաղ մը ըրին իրենց գիտցած երգերուն: Լսարանային դասապահի ընթացքին անդրադարձան «Մաշտոցի Արձագանգ»ի Սեպտեմբեր 2023 թիւին մէջ տեղ գտած նիւթերուն (**Բարեկենդան Վարագայ Սուրբ Խաչ**) եւ Դասարանային պահուն, իւրաքանչիւր դասարան ըստ իր ծրագրին, ունեցաւ իր դասաւանդութիւնը : Տարբեր դասարաններու նիւթերն էին Ս. Կոյս Մարիամ, Ստեղծագործութիւն, Վերջին Ընթրիքը (պատրաստուելու համար յաջորդ Կիրակի եկեղեցւոյ մէջ Սուրբ Հաղորդութիւն ստանալու), Վարագայ Սուրբ Խաչ, Ասուածաշունչի ներածական:



ՀՈԿՏԵՄԲԵՐ

1-ին Կիրակնօրեայ Դպրոցը եկեղեցի ուղղուեցաւ, ուր աշակերտները, ուսուցիչներն ու տնօրէնը Ս. Հաղորդութիւն ստացան: Վերադառնալով դպրոց, աշակերտները իրենց դասարաններուն մէջ անդրադարձան **Ս. Հաղորդութեան խորհուրդին**, ինչպէս նաեւ **Սուրբ Գեորգին** եւ **Վարագայ Ս. Խաչին**:

8-ին Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները, ըստ իրենց դասարանային բաժանումներուն, ունեցան 3 դասապահեր: Երգեցողութեան պահուն սկսան Ս. Թարգմանչացի երգեր սորվիլ: Լսարանային դասապահի ընթացքին անդրադարձան «Մաշտոցի Արձագանգ»ի Հոկտեմբեր 2023 թիւին մէջ տեղ գտած նիւթերուն (**Յիսուսի 72 աշակերտները**, Ս. Թարգմանչաց) եւ Դասարանային պահուն, իւրաքանչիւր դասարան ըստ իր ծրագրին, ունեցաւ իր դասաւանդութիւնը :

15-ին նշելու համար **Թարգմանչաց սուրբերուն տօնը**, դասարանները կատարեցին զանազան ձեռնարկային աշխատանքներ եւ երգեցողութեան պահուն երգեցին «Այբ, Բեն, Գիմ... եւ սորվեցան “Որք զարդարեցին...” շարականը: Այս առիթով, մեր գրադարանի գիրքերու ցուցահանդէս մը կազմակերպեցինք, եւ **Իւրաքանչիւր աշակերտ հայերէն գիրք մը ստացաւ որպէս նուէր**: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները սորվեցան Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց խօսքերը.

«Առանց **մեսրոպեան ոճով մարդակերտումի**, խախտու եւ բոլոր կերտուածքները մեր ազգային կեանքին, ինչպէս խախտու եւ աւազակիմա ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:

«Հայ Գիրքը միւռո՛ն է մեր ժողովուրդի զաւակներուն համար: **Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միւռոնուի հայութեամբ»:**

22-ին Աշակերտները տօնեցին 4 **Ս. Աւետարանիչներուն (Մատթէոս, Մարկոս, Դուկաս եւ Յովհաննէս)** տօնը՝ եւ շարունակեցին Ս. Թարգմանչաց երգեր սորվիլ:

29-ին Աշակերտները տօնեցին **Ս. Խաչի գտնուելուն տօնը** եւ շարունակեցին Ս. Թարգմանչաց երգեր սորվիլ: Դասարանային պահուն իւրաքանչիւր դասարան շարունակեց իր ծրագիրը:









ՆՈՅԵՄԲԵՐ

Լսարանային պահերուն՝

5-ին աշակերտները անդրադարձան **Ս. Յովհան Ոսկեբերան** հայրապետին, ինչպես նաև **Ամենայն Սրբոց** տօնին:

12-ին Ս. Գաբրիել եւ Ս. Միքայել Հրեշտակապետերու տօնին:

19 Նոյեմբեր-ին Յիսուսի առաքելներէն **Ս. Անդրեասի եւ Ս. Փիլիպպոսի** ինչպես նաև **Յիսնակի Պահքի Բարեկենդանի**ն:

26-ին Ս. Նիկողայոսին (որ նախատիպարն է Santa Claus-ին):
Դասարանային պահերուն շարունակեցին ըստ դասագրքերու, եւ երաժշտութեան դասապահին Սուրբ Ծննդեան երգեր սորվեցան: Աշակերտները նաև ստացան «Մաշտոցի Արձագանգ»-ի Նոյեմբեր 2023-ի թիւը:





ԴԵԿՏԵՄԲԵՐ

3-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան **Սբ. Թադեոս** եւ **Սբ. Բարթոլոմեոս** մեր առաջին լուսաւորիչներուն: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերու, եւ մանկապարտեզի, նախակրթարանի եւ երկրորդականի դասարանները ունեցան երաժշտութեան պահ Սբ. Ծննդեան երգեր սորվելով: Աշակերտները նաեւ ստացան «Մաշտոցի Արձագանգ»ի Դեկտեմբեր 2023-ի թիւը:

10-ին լսարանային պահերուն աշակերտները անդրադարձան **Սբ. Յակոբի Բարեկենդան**ին, ունեցան երաժշտութեան պահ եւ պատրաստուեցան Սբ. Ծնունդի յայտագրին:

17-ին Կիրակնօրեայ Դպրոցը ունեցաւ **Սուրբ Ծննդեան իր յայտագիրը**, եւ նաեւ ընդունեց **Կաղանդ Պապան** որ նուէրներով ուրախացուց աշակերտները:



Շնորհակալութիւն՝

ՀՕՄ-ի Մոնթրէալի «ՍՕՍԷ» Մասնաճիւղին, որ այս տարի եւս շնորհաւորեց մեր Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ մեր աշակերտներուն որպէս կաղանդչէք նուիրեց 500 տոլար:







ՅՈՒՆՈՒԱՐ


14-ին լսարանային պահուն, աշակերտները անդրադարձան **Յիսուսի Ս. Ծնունդին, Յայտնութեան եւ անուանակոչութեան**, ինչպէս նաեւ **Յովհաննէս Մկրտիչին**: Դասարանային պահը շարունակեցին ըստ դասագրքերու, եւ երաժշտութեան դասապահին Սուրբ Ծննդեան երգեր երգեցին:

21-ին, լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Առաջաւորաց Պահքի Բարեկենդանին**, հնգօրեայ պահքին, ինչպէս նաեւ գալիք **Յովնան մարգարէի** եւ Սուրբ Սարգիսի տօներուն: Դասարանային պահը շարունակուեցաւ ըստ ծրագրին:

28 Յունուարին, լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Առաջաւորաց Պահքին** եւ **Սուրբ Սարգիսին**: Երաժշտութեան պահուն Վարդանանց երգեր սկսան սորվիլ, Դասարանային պահը շարունակուեցաւ ըստ ծրագրին: Մեկնելէ առաջ աշակերտները ստացան **Ս. Սարգիսի անուշեղէն**:







ՓԵՏՐՈՒԱՐ

4 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Ս. Սահակ Պարթև** կաթողիկոսին, եւ գալիք **Ղեկնդեանց եւ Վարդանանց** տօներուն: Դասարանային պահերը շարունակուեցան ըստ ծրագրին:

11 Կիրակնօրեայ Դպրոցը տօնեց **Վարդանանց եւ Բուն Բարեկենդան:** Աշակերտները հաճելի ժամանակ անցուցին, Վարդանանց երգեր երգեցին, Pizza կերան, եւ պատրաստուեցան իրենց պահքին: Շնորհաւոր Բարեկենդան, Բարով հասնինք Սուրբ Յարութեան:

18 Փետրուարին, լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Ս. Թեոդորոս** զօրավարին, Մեծ Պահքի առաջին շաբթուան եւ Բ. (**Արտաքսման**) Կիրակիին: Երաժշտութեան պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին:

25 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Մեծ Պահքի երկրորդ շաբթուան եւ Գ. (**Անառակին**) Կիրակիին: Երաժշտութեան պահ ունեցան եւ Դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին: Երկր Ե.






ՄԱՐՏ

3 Կիրակնօրեայ Դպրոցը մասնակցեցաւ Գանատայի Հայոց Թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի կազմակերպած **Սուրբ Գրային Միօրեայ ճամբարին**:

10 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Միջինքին, ինչպէս նաեւ Մեծ Պահքի չորրորդ շաբթուան եւ **Ե. (Դատաւորի)** Կիրակիին: Երաժշտութեան պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին:

17 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն ի Վիրապի, ինչպէս նաեւ Մեծ Պահքի հինգերորդ շաբթուան եւ **2. (Գալստեան)** Կիրակիին: Երաժշտութեան պահ ունեցան եւ Դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին:





ԱՊՐԻԼ

7 Լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Նոր** Կիրակիին (**Կրկնագատիկ**) ինչպես նաև **Ս. Աստուածածնի Աւետման** տօնին: Երաժշտության պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին:

14 Լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Կանաչ** (**Աշխարհամատրան**) Կիրակիին: Երաժշտության պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին: Ուսուցիչները Մայիս 19ի ամավերջի հանդեսը սկսան ծրագրել:

21 Լսարանային պահուն աշակերտները անդրադարձան **Կարմիր** Կիրակիին: Երաժշտության պահ ունեցան եւ Դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին: Ուսուցիչները Մայիս 19ի ամավերջի հանդեսին սկսան պատրաստուիլ:

28 Ապրիլ 2023-ին Կիրակնօրեայ Դպրոցը լսարանային բաժնին ընթացքին անդրադարձաւ **Սուրբ Խաչի Երեւման** Տօնին ինչպես նաև տնօրէնը, ուսուցչական կազմն ու աշակերտները ոգեկոչեցին **Հայոց Տեղասպանութեան 109**-րդ ամեակը Խոստանալով՝

- . Ապրիլ **հայադրոշմ** կեանք մը
- . Վառ պահել հայաստանեայց եկեղեցւոյ **տօներն** ու **ազգային աւանդութիւնները**,
- . Լսել, մտիկ ընել ու երգել մեր **Հայանուագ շարականներն ուերգերը**,
- . Ամուր կառչած ֆսալ մեր **հայավայել** բարի բարքերուն ու սովորութիւններուն
- . Կարդալ ու կեանքի վերածել մեր **հայագրեալ Աստուածաշունչը**
- . եւ մանաւանդ **ՍԻՐԵԼ Հայը** ամբողջ տարուան ընթացքին:

Դասարանային պահը ընթացաւ ըստ դասագրքերու: Նախակրթարանի աշակերտները նաև ունեցան երաժշտության պահ:









Մայիս

5 լսարանային պահուն աշակերտները անդրադարձան Քրիստոսի Համբարձումին, Երաժշտության պահ ունեցան եւ դասարանային պահը շարունակեցին ըստ ծրագրին: Ուսուցիչները Մայիս 19ի ամսվերջի հանդեսին յայտագիրը վերջնականացուցին:

12 լսարանային բաժնին աշակերտները անդրադարձաւ Մայրերու Օրուն եւ Բ. Ծաղկագարդին: Դասարանային եւ երաժշտության պահերուն հանդեսի պատրաստութեան փորձերը շարունակուեցան:

19 Ամսվերջի հանդեսի փորձ եւ Հանդես...:





ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ **ԼԱ. ՏԱՐԻ**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ»ի
այս թիւը կը գտնուին նաեւ համացանցին վրայ
<https://www.sourphagop.org/period/vol31special.pdf>

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 2023-24 տարեշրջանի կազմը

Սարին Խշիշեան
Աննա Մարիա Շամոյեան
Սէրլի Ահարոնեան
Ռիմա Խարշաֆճեան
Հրակ Պանքեան
Սդեֆան Տեմիրճեան
Մհեր Պանքեան
Սեւակ Պապիկեան
Առէն Պապիկեան
Թամար Գիգիրեան
Յասմիկ Նաճարեան
Շողիկ Նաճարեան
Թորոս Պապիկեան